



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄԼԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
<ԱՄԱԼՍԱՐԿՆ
ՎԱՐՍԼԱՎԱՐԿՆ



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

Գայանե Ավագյան. Հայոց ցեղասպանության տրավման՝ որպես ազգային ինքնության հիմնահիմունքի (1960-ական թթ. լիբանանահայ մամուլի օրինակով).....233

Gayane Avagyan. The Trauma of Armenian Genocide as an Issue of Armenian National Identity (on the Example of Armenian Press of Lebanon in the 1960S)

Гаяне Авагян. Травма Геноцида Армян - как фундаментальный вопрос национальной идентичности (на примере армянской прессы Ливана 1960-ых годов)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲԻՈՆ

TRIBUNE OF YOUNG RESEARCHER

ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Գևորգ Բարսեղյան. Հանցագործությունների որակման առանձնահատկությունները հանցակցի սահմանազանցման պարագայում.....244

Gevorg Barseghyan. Peculiarities of Qualification of Crimes, Related to the Excess of Complicity

Геворг Барсегян. Особенности квалификации преступлений, сопряжённых с эксцессом соучастия

Սուրեն Մինասյան, Արփինե Մաթևոսյան. Չինաստանի պետական մասնակցությամբ ընկերությունները և տնտեսական բարեփոխումների ապագան.....262

Suren Minasyan, Arpine Matevosyan. State-Owned Enterprises and Future of Economic Reforms of China

Сурен Минасян, Арпине Матевосян. Государственные предприятия и будущее экономических реформ Китая

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները.....274

The Requirements for «Scientific Artsakh» Journal.....275

Требования к оформлению статей для журнала «Научный Арцах».....277

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՍԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՑԱԿՑԻ
ՍԱՀՄԱՆԱԶԱՆՑՄԱՆ ԴԱՐԱԳԱՅՈՒՄ*

ՀՏԴ 343.237

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
gevorg.barseghyan@ysuamail.am*

Սույն աշխատանքում համապարփակ կերպով ներկայացված են հանցակցի սահմանազանցման (էքսցեսի) հասկացությունը, դրա տեսակները, յուրաքանչյուր հանցակցի կողմից սահմանազանցում թույլ տալու հնարավորությունը: Անցկացված են համեմատականներ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի միջև: Աշխատանքում հիշատակված են նաև ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի՝ հանցակցությանը վերաբերող որոշ դրույթներ: Աշխատանքում վերլուծված են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ հանցակցի սահմանազանցման առնչվող նախադեպային որոշումները և հետաքրքրություն ներկայացնող դատական գործեր:

Սույն աշխատանքի նպատակն է սահմանազանցման ընդհանուր հասկացության, սահմանազանցմամբ ուղեկցվող հանցագործությունների որակման և պատասխանատվության կանոնների մշակումը, քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների ներկայացումը:

Դրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- վերլուծել հանցակցության հասկացությունը, էությունը և հատկանիշները՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ համեմատականներ անցկացնելով ՀԽՍՀ 1961 թվականի օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի միջև,
- վերլուծել սահմանազանցման հասկացությունը, տեսակները և հատկանիշները,
- տալ քրեահրավական գնահատականներ հանցակիցների սահմանազանցման առանձին դրսևորումներին,
- դիտարկել սահմանազանցմամբ ուղեկցվող հանցանքների քրեահրավական գնահատականների խնդիրները:

Սույն աշխատանքի մեթոդոլոգիական բազան են կազմում դիալեկտիկական ու պատմական մեթոդները: Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր և հատուկ մեթոդների

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020թ., գրախոսվել՝ 27.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

օգտագործմամբ, ինչպիսիք են՝ դոգմատիկ, իրավահամեմատական, իրավական մոդելավորման և տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հիմնվելով ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծության վրա՝ աշխատանքում դիտարկվել են սահմանազանցմամբ կատարված հանցագործությունների որակման որոշ խնդիրներ, և առաջարկված են դրանց հնարավոր օրենսդրական լուծումները:

Հիմնաբառեր՝ հանցակից, համակատարող, սահմանազանցում, միջնորդավորված կատարում, անչափահաս, հոգեկան հիվանդությամբ տառապող անձ:

Քրեական իրավունքի տեսության մեջ ամենաբարդ ինստիտուտներից մեկն է համարվում հանցակցությունը, որի տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ: Նշված հիմնախնդիրների շարքում կարևորվում է հանցակցի սահմանազանցման հարցը:

Տեսական գրականության մեջ սահմանազանցումը կամ դիտարկվում է հանցակցության ընդհանուր կոնտեքստում, կամ էլ ուշադրություն է դարձվում կատարողի սահմանազանցմանը: Այլ հանցակիցների (կազմակերպչի, դրոզի, օժանդակողի) սահմանազանցման վերաբերյալ գիտական հետազոտություններ գրեթե չկան, իսկ եղածներն էլ չեն բովանդակում համալիր հետազոտություն:

Խմբի կողմից իրականացվող հանցագործություններում ընդհանուր դիտավորությունից շեղման դեպքերը հաճախ են հանդիպում: 2008-2019թթ.-ին ՀՀ-ի դատարանների առջև 39 անգամ տարբեր գործերով բարձրացված է եղել հանցակցի (հիմնականում՝ կատարողի) սահմանազանցման հարցը: Նշված գործերից 22-ում դատարանը հաստատել է հանցակցի սահմանազանցման առկայությունը, ընդ որում՝ դրանցից 17-ում արձանագրվել է քանակական սահմանազանցում, իսկ 5-ում՝ որակական: Մնացած գործերով դատարանը սահմանազանցում չի արձանագրել:

Սահմանազանցումը, ինչպես և հանցակցության ինստիտուտի հետ կապված ցանկացած երևույթ, բավականին բարդ է: Խնդրահարույց են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են, օրինակ, միջնորդավորված կատարման դեպքում սահմանազանցմանը, սահմանազանցման դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության շրջանակի հստակեցմանը և այլն: Առավել խնդրահարույց է այն, որ ՀՀ գործող քրեական օրենսդրությունը, թեև տվել է սահմանազանցման հասկացությունը, սակայն չի հստակեցրել սահմանազանցման դեպքում հանցակիցների արարքների որակման առանձնահատկությունները: Թեև ներկայացված հարցին պատասխան է փորձում տալ քրեական իրավունքի դոկտրինան, սակայն այն իրավակիրառողի համար պարտադիր նշանակություն չունի: Ներկայացված խնդիրները վկայում են ընտրված թեմայի կարևորության ու արդիականության մասին:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի⁵⁷¹ (այսուհետ՝ Օրենսգրք) 37-րդ հոդվածի համաձայն՝ «հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

Երկու և ավելի անձանց մասնակցությունը հանցակցության քանակական հատկանիշն է, առանց որի հանցակցությունն անհնար է: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է հասած լինի քրեական պատասխանատվության ենթակա լինելու տարիքի և լինի մեղսունակ⁵⁷²:

⁵⁷¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2003 թվականի ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին: ՀՕ-528-Ն, ՀՀԳՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

⁵⁷² Օրենսգրքում առկա է որոշակի անորոշություն: Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: Այս հոդվածը

Վերը շարադրվածի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծի⁵⁷³ (այսուհետ՝ Նախագիծ) 46-րդ հոդվածը ամրագրում է.

«1. Հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:

2. Հանցակցությունը բացակայում է հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ:

3. Համակատարումը բացակայում է այն դեպքում, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար՝ որպես կատարող»:

Կազմակերպիչները, դրդիչները, օժանդակողները այն հանցանքներում, որտեղ օբյեկտիվ կողմը իրականացրել են անմեղսունակները կամ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասածները, ճանաչվում են կատարողներ: Ասվածը բխում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասից, որով սահմանվում է հետևյալը. «կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ»:

Սակայն միևնույն հանցագործությանը երկու և ավելի անձանց մասնակցությունը ինքնին չի վկայում հանցակցության մասին այն իմաստով, որով այն նկարագրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում: Հնարավոր են դեպքեր, երբ մի քանի անձի գործողությունները, իրենց ամբողջությամբ հասցնելով հանցավոր հետևանքի, հանցակցություն չառաջացնեն: Պրոֆեսոր Գալիկբարովը նշում է հետևյալ օրինակը. Ա-ն գողություն կատարելու նպատակով ջարդում է պահեստի դուռը, բայց նկատելով մոտեցող Բ-ին, փախչում է հանցանքի վայրից, իսկ Բ-ն, օգտվելով առիթից, որ պահեստի դուռը ջարդված է, կատարում է գողություն: Այս դեպքում չի կարելի Ա-ին և Բ-ին համարել հանցակիցներ⁵⁷⁴:

Հանցակցության հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել Ա.Մայթևոսյանի և Ռ.Հարությունյանի գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

« (...) հանցակցությանը բնորոշ է 3 հատկանիշ.

հանցակիցներին քրեական պատասխանատվության ենթարկելու առումով խնդրահարույց է հանցակցության դեպքում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը հանցագործության օբյեկտիվ կողմը չեն իրականացնում, այսինքն՝ նրանց արարքում բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմը: Իսկ Օրենսգրքի 3-րդ հոդվածը պահանջում է հանցակազմի բոլոր հատկանիշների առկայություն: Այս առումով լիովին ընդունելի է Նախագծի 15-րդ հոդվածի իրավակարգավորումը, համաձայն որի՝ քրեական պատասխանատվության հիմքը ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցանք կատարելն է կամ դրանց հանցակցելը: Օրենսգրքի 3-րդ հոդվածը խնդրահարույց է նաև չավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու պարագայում, քանի որ այս դեպքում էլ բացակայում է հանցակազմի որևէ հատկանիշ. ձևական հանցակազմերի դեպքում օբյեկտիվ կողմ չի կատարվել, նյութական հանցակազմերի դեպքում, օրինակ, հետևանքը չի առաջացել: Ըստ այս կարգավորման՝ նկարագրված դեպքերում քրեական պատասխանատվության հարց չի կարող առաջանալ, ուստի անիմաստ է խոսել նաև հանցակիցների քրեական պատասխանատվության մասին նշված կամ նմանատիպ դեպքերում, ինչը սակայն հնարավոր է և տեսության մեջ ստացել է չհաջողված հանցակցություն անվանումը:

⁵⁷³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծ, որը հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2115/about> (15.03.2020):

⁵⁷⁴ Տե՛ս Галикбаров Р.Р. Совершение преступления группой лиц, Омск, 1980, С. 58:

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից

2. գործողությունների համատեղությունը

3. հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են միասնական արդյունքի:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը⁵⁷⁵»:

Արարքների համատեղության հասկացությունը կազմված է մի քանի տարրից: Առաջին՝ հանցանքը կատարվում է մի քանի անձի միավորված ջանքերով: Հանցակիցներից յուրաքանչյուրը կատարում է հանցանքի իր բաժինը և դրանով իսկ այս կամ այն չափով նպաստում է մյուս հանցակիցների մտադրությունների իրականացմանը: Հանցակցության այս հատկանիշը, որը սովորաբար անվանվում է օբյեկտիվ հատկանիշ, ավելի ճիշտ կլիներ թերևս կոչել օբյեկտիվ-սուբյեկտիվ, քանզի այն ունի նաև հոգեբանական բովանդակություն:

Հանցակիցների արարքների համատեղությունը արտահայտվում է նրանում, որ, յուրաքանչյուր հանցակցի արարքը կոնկրետ հանգամանքներում անհրաժեշտ պայման է մյուս հանցակիցների արարքների կատարման համար: Հանցակիցների արարքները պետք է լինեն փոխկապակցված և փոխպայմանավորված: Յուրաքանչյուր հանցակցի արարք պետք է ուղղված լինի մյուս հանցակիցների հետ ընդհանուր արդյունքին:

Հանցավոր հետևանքը պետք է պատճառական կապի մեջ լինի հանցակիցներից յուրաքանչյուրի արարքների հետ: Ժամանակին պրոֆեսոր Շարգորոդսկին հարցադրում է արել՝ ինչու՞, օրինակ, հանցանքի օբյեկտիվ կողմը չիրականացնող դրոշի գործողությունները պետք է պատճառական կապի մեջ գտնվեն կատարողի վարքագծի արդյունքում առաջացրած հետևանքի հետ⁵⁷⁶: Այս հարցին պատասխանել է պրոֆեսոր Իվանովը՝ ակադեմիական թիավարման օրինակի վրա դիտարկելով նավակի մեջ գտնվող թիավարների ու ղեկավարի (ղեկակալի) արարքները: Եթե թիավարները իրենց մկանային ջանքերի միջոցով նավակը մոտեցնում են վերջնագծին, ապա ղեկակալը նման վարքագիծ չի դրսևորում: Նրա ներդրումը միջնորդավորված է, բայց և կարևոր. հակառակ դեպքում նավակում նրա գտնվելը անիմաստ կլիներ⁵⁷⁷:

Քրեական իրավունքի տեսության մեջ կան տեսակետներ, որոնք ժխտում են հանցակիցների արարքների և կատարված հանցագործության միջև պատճառական կապի հաստատման անհրաժեշտությունը: Այսպիսի մոտեցման կարելի է հանդիպել, օրինակ,

⁵⁷⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշումը՝ ըստ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ ՀՀ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքի, 28-րդ կետ, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401226, (15.03.2020):

⁵⁷⁶ Տե՛ս **Шаргородский М.Д.** Некоторые вопросы общего учения о соучастии // Правоведение. 1960. №1:

⁵⁷⁷ Տե՛ս **Иванов Н.Г.** Понятие и формы соучастия в советском уголовном праве, Саратов, 1991, С. 57:

այրո՞քտոր Բիկովի մոտ⁵⁷⁸: Վերը նշված տեսակետները (Շարգորդակու, Բիկովի) հավանության չեն արժանացել քրեական իրավունքի մասնագետների մեծամասնության կողմից, քանզի դրանք ստեղծում են այն անձանց շրջանը անհարկի լայնացնելու հնարավորություն, որոնք ենթակա են քրեական պատասխանատվության^{579, 580, 581}:

Բացի այդ, պատճառական կապը հնարավորություն է ընձեռում սահմանազատելու հանցակցությունը հանցագործությանը առնչակցությունից, օրինակ՝ նախապես չխոստացված պարտակումից: Հանցակցությունը հնարավոր է միայն մինչև հանցագործության ավարտը, այսինքն՝ մինչև համապատասխան օբյեկտի նկատմամբ ոտնձգության փաստացի դադարեցման պահը:

Հանցակցության դեպքում վնասը վրա է հասնում համատեղ գործող անձանց արարքների ամբողջության արդյունքում: Այս ամենի ուժով հանցավոր հետևանքը չի կարող բաժանվել առանձին մասերի՝ կախված հանցակիցների քանակից: Այն ընդհանուր է և անբաժանելի հենց պատճառման համատեղության ուժով, ինչը միևնույն ժամանակ չի նշանակում ընդհանուր հանցավոր արդյունքին հասնելու գործում «ներդրման» հավասարություն: Այս ամենով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է հետևյալ իրավակարգավորումը. «Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը»:

Հնարավոր են սակայն դեպքեր, երբ հանցանքը կատարվի մի քանի անձի կողմից, և առկա լինեն օբյեկտիվ կողմից համատեղությունը բնութագրող վերոնշյալ պայմանները, բայց հանցակցությունը, այնուամենայնիվ, բացակայի: Հանցակցության համար անհրաժեշտ է համաձայնություն գոնե երկու անձի միջև: Այսպես, եթե խմբում կան կատարող, դրդիչ և օժանդակող, ապա նրանց հանցակիցներ ճանաչելու համար բավարար է, որ դրդիչն իմանա կատարողի արարքների մասին, իսկ օժանդակողի արարքներին դրդիչը կարող է անտեղյակ լինել: Համաձայնությունը կարող է ձեռք բերվել բանավոր կամ գրավոր կերպով, կամ էլ կոնկրետ գործողությունների միջոցով: Համաձայնությունը կարող է արտահայտվել անձի՝ այլ անձանց հանցավոր արարքների ակնհայտ մասնակցությամբ:

Այնտեղ, ուր բացակայում է գիտակցումը առ այն, որ անձը գործում է այլոց հետ համատեղ ընդհանուր հանցավոր նպատակին հասնելու համար, բացակայում է հանցակցությունը: Այս հանգամանքին անդրադարձել է նաև Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը կոնկրետ գործեր քննելիս: Այսպես, Բ-ն և Մ-ն վիճում էին զարեջրատան մոտ: Չայրանալով Մ-ի վրա՝ Բ-ն գնաց տուն, վերցրեց երկու հատ դանակ և վերադարձավ: Մ-ն, տեսնելով Բ-ի մոտ եղած դանակները, դիմեց փախուստի: Բ-ն սկսեց հետապնդել նրան: Այդ ժամանակ փողոցով քայլում էր Տ-ն՝ ուղևորվելով զարեջրատուն: Երբ Մ-ն անցնում էր Տ-ի կողքով, վերջինս ոտքը առաջ մեկնեց, որի հետևանքով Մ-ն ընկավ: Օգտվելով առիթից՝ Բ-ն մոտեցավ ընկած Մ-ին, դանակի մի քանի հարված հասցրեց: Ստացված մարմնական վնասվածքներից Մ-ն մահացավ: Տ-ն դատապարտվել էր սպանությանն օժանդակելու համար:

Գերագույն դատարանը, քննելով այս գործը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. օժանդակությունը՝ որպես հանցակցության ձևերից մեկը, ենթադրում է այն անձի տեղեկացվածությունը կատարվող հանցանքի մասին, որը մեղադրվում է օժանդակության

⁵⁷⁸ Տե՛ս Быков В.М. Уголовная ответственность за организацию преступного сообщества (преступной организации) // Российский следователь, 2000, № 6, С. 45:

⁵⁷⁹ Տե՛ս Успенский А.В. Проблема обоснованности причинной связи при соучастии в совершении преступления // Вестник Моск. ун-та, Сер. 11, Право, 1998, № 5, С. 34:

⁵⁸⁰ Տե՛ս Солопанов Ю. О соучастии // Законность, 2001, № 2, С. 10:

⁵⁸¹ Տե՛ս Иванов Н.Г. Понятие и формы соучастия в советском уголовном праве, Саратов, 1991, С. 57:

համար: Գերագույն դատարանը փաստեց, որ գործով ձեռք բերված ապացույցներով չի հաստատվում, որ Տ-ն իմացել է Բ-ի հանցավոր մտադրությունների մասին, երբ վերջինս վազում էր Մ-ի հետևից: Արդյունքում Տ-ն արդարացվեց⁵⁸²:

Հանցակցության օրենսդրական բնորոշումից հետևում է, որ այն «... երկու կամ ավելի անձանց դիտավորյալ ... մասնակցությունն» է: Հանցակիցներից յուրաքանչյուրի արարքները պետք է բնութագրվեն մեղքի դիտավորյալ ձևով: Պրոֆեսոր Պոզնիշևը համարում էր. «Անհրաժեշտ է կամքի այն միավորումը, որը ենթադրում է յուրաքանչյուրի իմացությունը մյուսների դիտավորության մասին և արտաքինապես արտահայտվում է համաձայնությամբ»⁵⁸³: Իհարկե, քրեական իրավունքի տեսության մեջ արտահայտվել է կարծիք, որ հնարավոր է հանցակցությունն նաև անզգույշ հանցագործություններում⁵⁸⁴, սակայն այս տեսակետը չընդունվեց մեծամասնության կողմից:

ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքում⁵⁸⁵ այս առումով առկա էր անորոշություն: Այս օրենսգրքի 17-րդ հոդվածը սահմանում էր. «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը հանցագործության կատարմանը»: Այս դրույթի տառացի մեկնաբանման արդյունքում ստեղծվում է տպավորություն, որ հանցակցություն հնարավոր է նաև անզգույշ հանցագործություններում:

Հանցակիցների՝ միմյանց արարքների մասին տեղեկացվածության վերաբերյալ ևս տեսակետները նույնական չեն: Հեղինակների մի մասը պնդում է, որ հանցակցության համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հանցակցի տեղեկացվածությունը մյուս հանցակիցների արարքների մասին⁵⁸⁶: Երկրորդ մոտեցման կողմակիցները կարծում են, որ հանցակցությանը բնութագրական չէ արարքների մասին տեղեկացվածությունը և փոխապայմանավորվածությունը:

Մեր կարծիքով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դիտավորությունը ենթադրում է հանցակցի կողմից կատարվող արարքների գիտակցում, առավել ճիշտ է հանցակիցների փոխադարձ տեղեկացվածության և նրանց գործողությունների փոխապայմանավորվածության անհրաժեշտության հավաստումը, այլապես անիմաստ է խոսել սահմանազանցման մասին: Սակայն ասվածը ամենևին էլ չի ենթադրում բոլոր հանցակիցների՝ միմյանց մասին տեղեկացվածություն:

Հանցակցությունը բացակայում է այն ժամանակ, երբ կատարողը չի գիտակցում, որ հանցանք է կատարում այլ անձանց հետ համատեղ: Հանցակիցը պետք է գիտակցի, որ մյուս հանցակիցների հետ համատեղ կատարում է հանրության համար վտանգավոր ոչ թե ջանկացած արարք, այլ կոնկրետ հանցագործություն կամ հանցագործություններ:

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը, վերլուծելով հանցակցության սուբյեկտիվ հատկանիշը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Հանցակցի քրեական պատասխանատվության հիմքում ընկած է ոչ միայն նրա և կատարողի արարքի միջև պատճառական կապի առկայությունը, այլ նաև նրա կողմից կատարողի արարքի և դրա հետևանքների նկատմամբ որոշակի գիտակցական-կամային վերաբերմունք դրսևորելը»:

⁵⁸² Տե՛ս Судебная практика Верховного Суда РФ. 2000. № 6. – С. 15:

⁵⁸³ Տե՛ս Познышев С.В. Основные начала науки уголовного права. - М., 1912. – С. 184:

⁵⁸⁴ Տե՛ս Рагог А., Нерсисян В. Дифференциация назначения наказания за неосторожные преступления // Российская юстиция. 1999. № 7. – С. 23:

⁵⁸⁵ Տե՛ս Հայաստանի հարիրդային Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգրքը, որը ընդունել է Գերագույն խորհուրդը 1961 թվականի մարտի 7-ին: Այն ուժի մեջ է մտել 1961 թվականի հուլիսի 1-ին և ուժը կորցրել 2003 թվականի օգոստոսի 1-ին: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=4> (16.03.2020թ.)

⁵⁸⁶ Տե՛ս, օրինակ, Козлов А.П. Соучастие. - СПб., 2001, С. 87; Корчагина А.Ю. Субъективная сторона эксцесса исполнителя в преступлении // Российский следователь, 2002, № 11, С. 38:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ յուրաքանչյուր հանցակից պետք է՝

- 1) գիտակցի, որ համատեղ գործում է կատարողի կամ այլ հանցակցի հետ.
- 2) գիտակցի, որ իր արարքն անհրաժեշտ պայման է մյուս հանցակցի կողմից արարք կատարելու համար և ցանկանա համատեղ մասնակցել հանցագործությանը.
- 3) նյութական հանցակազմի դեպքում՝ նախատեսի հանրորեն վտանգավոր հետևանք և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը»⁵⁸⁷:

Օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հանցակիցների պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը: Այսպիսով՝ դատարանը պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնի հանցագործությանը հանցակիցներից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը: Մասնակցության բնույթը որոշվում է նրանով, թե ինչ ֆունկցիաներ է իրականացրել հանցակիցը, եղել է կատարող, կազմակերպիչ, դրդիչ, թե՞ օժանդակող: Մասնակցության աստիճանը հանցակցության քանակական բնորոշիչն է, որը ցույց է տալիս, թե որքան ակտիվ է գործել այս կամ այն հանցակիցը իր ֆունկցիաների իրականացման ընթացքում, ինչպիսի հաստատականություն է դրսևորել ընդհանուր հանցավոր արդյունքին հասնելու համար: Մասնակցության աստիճանի ցուցանիշը օրենքում որևէ կերպով չի բնութագրվում, սակայն քրեական իրավունքի տեսությունում ու պրակտիկայում առանձնացվում են գլխավոր ու երկրորդական մասնակիցներ: Հարկ է սակայն ընդգծել, որ նախապես որոշել, թե հանցակիցներից ում է պատկանում գլխավոր դերը, ում՝ երկրորդականը, գործնականում անհնար է, քանի որ հանցակցի վտանգավորությունը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված կոնկրետ դեպքի առանձնահատկություններով: Այսպես, կատարողը մի դեպքում կարող է միայն մեխանիկաբար իրականացնել համատեղ մշակված հանցանքը՝ հրաժարվելով հանցանքը ավարտին հասցնելուց, եթե նախապես ընտրված մեթոդներն ու միջոցները չեն հանգեցնում ցանկալի արդյունքին, իսկ մեկ այլ դեպքում գործելով ձեռք բերված համաձայնության սահմաններում՝ դրսևորել բացառիկ վճռականություն նպատակին հասնելու համար, ընտրել այլ, ավելի էֆեկտիվ միջոցներ ու մեթոդներ: Օժանդակողը կարող է սահմանափակվել հանցանքի կատարման համար միայն ինչ-որ միջոցներ տրամադրելով կամ կարող է ինքը կատարողին սովորեցնել առավել արդյունավետ միջոցներ կիրառել: Այս հանցակիցների մասնակցության աստիճանի տարբերությունը երկու դեպքերում ակնհայտ է, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել պատժաչափը որոշելիս:

Հանցակիցների արարքների համաձայնեցվածությունը համապատասխանում է հանցակիցների դիտավորության կամային տարրին: Հանցակցությունը ծագում է հանցակիցների միջև համաձայնության ձեռքբերման պահից: Համաձայնության բովանդակությունը կարող է ներառել համաձայնություն՝ հանցագործության նպատակների մասին, հանցանքի կատարման եղանակների մասին և այլն: Համաձայնություն կարող է ձեռք բերվել կամ մինչև հանցագործությունն սկսելը, կամ հանցանքի կատարման ընթացքում, սակայն մինչև հանցանքն ավարտին հասցնելը:

Հանցակիցների դիտավորության ընդհանրությունը չի բացառում նրանց մեղքի ինդիվիդուալությունը: Սա պայմանավորված է նրանով, որ մեղքը հոգեբանական բարդ երևույթ է, պրոցես՝ ձևավորման ընթացքում անձնական և իրադրային գործոնների

⁵⁸⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 05.12.2012թ. թիվ ԵԱԶԴ/0174/01/11 որոշումը՝ ըստ Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի և Ա.Միքայելյանի պաշտպան Կ.Մանուչարյանի վճռաբեկ բողոքների, 17-րդ կետ, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905400902, (15.03.2020):

ազդեցության ներքո հաճախ փոփոխվող⁵⁸⁸: Հանցակցության դեպքում հանցագործության տևելիքը կողմի դիմամիկան կարող է արտահայտվել:

- կատարողի դիտավորության բովանդակության և ուղղվածության փոփոխությամբ,
- նոր դիտավորության առաջացմամբ, այսինքն՝ նոր հանցանք կատարելու մտադրությամբ,
- հանցակիցների կողմից նախորոշված հանցանքը կատարելու դիտավորության վերացմամբ:

Վերը թվարկված հանգամանքները եական նշանակություն ունեն համատեղ կատարված արարքի որակման, հանցակցի սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման և խմբին մեղսագրվող հանցանքների վերաբերյալ այլ հարցեր պարզելու համար (հանցակցի կամուփին հրաժարում, գործում զոջալ և այլն):

Հանցակիցների դիտավորության սահմանների պարզումը պայմանավորված է պատասխանատվության անհատականացման սկզբունքով: Ասվածի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է. «Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը»: Համանման իրավակարգավորում ամրագրված էր նաև ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքում, որի 17-րդ հոդվածի վերջին պարբերությունում սահմանված էր. «Հատարանը պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնի հանցագործության կատարման մասնակիցներից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանն ու բնույթը»: Նույնաբովանդակ իրավակարգավորում ամրագրված է նաև Նախագծի 48-50-րդ հոդվածներում:

Հանցակիցների մտադրությունը կյանքի է կոչում կատարողը: Ցանկացած արարքի, անգամ մանրամասն նախապատրաստված ու ծրագրված հանցանքի կատարման ընթացքում կատարողը, որպես կանոն, մտցնում է որոշ «ճշտումներ»: Այդ ճշտումները կարող են բացատրվել սովորություններով, բնավորությամբ, խառնվածքով, հոգեկան վիճակով, սակայն կարող են պայմանավորված լինել նաև հանգամանքների փոփոխությամբ, որոնցում կատարողը ստիպված է գործել, այսինքն՝ գործոններով, որոնք աջակցում կամ խոչընդոտում են հանցանքի կատարմանը⁵⁸⁹:

Կատարողի ճշտումները կարող են բավականին տարաբնույթ լինել, հետևաբար տարբեր են նաև դրանց քրեաիրավական նշանակությունը: Հաճախ դրանք հանգեցնում են նրան, որ կատարողը դուրս է գալիս հանցակիցների ընդհանուր դիտավորության սահմաններից կամ, ընդհակառակը, ամբողջությամբ չի կատարում որոշված արարքները: Այս դեպքերը քրեական իրավունքի տեսության մեջ անվանվում են էքսցես կամ սահմանազանցում:

Սահմանազանցումը (էքսցեսը) իրավիճակ է, որի դեպքում հանցակիցը հանցանքի կատարման ընթացքում դուրս է եկել հանցակիցների ընդհանուր մտադրության սահմաններից և կատարել հանցանք, որի վերաբերյալ հանցակիցները պայմանավորվածություն ձեռք չէին բերել: ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հանցակցի սահմանազանցում է համարվում անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ»: Լատիներենից թարգմանաբար «էքսցես» բառը նշանակում է ինչ-որ բանի սահմանների անցում, տվյալ դեպքում հանցավոր պլանի սահմանների անցում, քանզի մյուս հանցակիցները չեն ունեցել նման հանցանք կատարելու դիտավորություն, ոչնչով չեն աջակցել հանցանքի կատարմանը և անգամ չեն իմացել դրա մասին, պատասխանատվություն չեն կրում: ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Հանցակցի սահմանազանցման համար մյուս

⁵⁸⁸ Տե՛ս Лунеев В. В., Криминалогия. Москва, Юрайт, 2019, С. 107:

⁵⁸⁹ Տե՛ս Бурчак Ф.Г., Учение о соучастии по советскому уголовному праву. Киев, 1969, С.

հանցակիցները պատասխանատվություն չեն կրում»: Համանման իրավակարգավորումներ է պարունակում նաև Նախագիծը: Նախագծի 50-րդ հոդվածը ամրագրում է. «1. Հանցակցի սահմանազանցում է համարվում հանցակցի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որն ընդգրկված չի եղել մյուս հանցակիցների դիտավորության մեջ: 2. Հանցակցի սահմանազանցման համար մյուս հանցակիցները ենթակա չեն քրեական պատասխանատվության...»: Հարկ է նշել, որ ՀՅԱՄԶ 1961 թվականի քրեական օրենսգրքը հանցակցի սահմանազանցման վերաբերյալ որևէ իրավակարգավորում չէր բովանդակում:

«Էքսցես» բառը լեզվաբանական իմաստով (*excedo, excessus*) համապատասխանում է այն դեպքերին, երբ խմբի կողմից կատարվող հանցանքի մասնակիցը դուրս է գալիս մյուս հանցակիցների դիտավորության սահմաններից: Որոշ տեսաբաններ, այդ թվում Պոզնիշևը⁵⁹⁰, հենց այսպես են մեկնաբանում հանցակցի սահմանազանցումը: Կոլոկովը⁵⁹¹, Տագանցևը սահմանազանցման շարքին են դասում նաև այն դեպքերը, երբ արդյունքում կատարվում է այլ հանցանք, քան այն, ինչը ցանկանում էին հանցակիցները: Մենք ևս հակված ենք երկրորդ տեսակետին, քանի որ այն առավել ընդգրկում է:

Քրեական իրավունքի տեսության մեջ հանցակցի սահմանազանցման վերաբերյալ գործում է Ալբերտ Բերնեի տեսակետը՝ արտահայտված «Die Lehre von der Teilnahme am Verbrechen» աշխատությունում⁵⁹²: Նա առանձնացնում է երկու զուգակցություն.

- Երբ կատարողի արարքը միաբնույթ չէ այն արարքին, որի կատարումը պլանավորված էր,
- Երբ կատարողի արարքը միաբնույթ է այն արարքին, որի կատարումը պլանավորված էր:

Առաջին դեպքը այսպես կոչված որակական սահմանազանցումն է: Օրինակ, եթե Ա-ն դրդել է Բ-ին կատարելու գողություն, սակայն Բ-ն կատարում է բռնաբարություն, ապա Բ-ի արարքը՝ բռնաբարությունը, Ա-ին չի մեղսագրվում: Որակական սահմանազանցումը առկա է այն դեպքում, երբ կատարվում է բնույթով այլ հանցագործություն, քան պլանավորել էին հանցակիցները:

Որակական սահմանազանցումը բնութագրվում է նրանով, որ կատարողը իրականացնում է պայմանավորված հանցագործությունից իր բնույթով բոլորովին տարբեր հանցանք կամ էլ պայմանավորվածից բացի կատարում է ևս մեկ այլ հանցանք: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են տուժողի առողջությանը վնաս հասցնել, բայց կատարողը սպանում է նրան կամ պայմանավորված գողությունից բացի բռնաբարություն է կատարում և այլն⁵⁹³:

Որոշակիորեն հարաբերակցվում են որակական սահմանազանցումը և, այսպես կոչված, չհաջողված հանցակցությունը⁵⁹⁴: Այսպես, եթե հանցակիցը պայմանավորվածի փոխարեն իրականացնում իր բնույթով բոլորովին այլ հանցանք, և եթե այդ արարքը հանցակիցների դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի բաղկացուցիչ մասը չէ և չի կլանվում կատարված հանցագործությամբ, ապա առկա է չհաջողված հանցակցություն:

Քանակական սահմանազանցման դեպքում կատարողը վնաս է պատճառում այն օբյեկտին, որը պայմանավորվածության համաձայն՝ ընդգրկված էր հանցակիցների

⁵⁹⁰ Տե՛ս **Познышев С.В.**, Основные начала науки уголовного права, М., 1912, С. 372:

⁵⁹¹ Տե՛ս **Колоколов Г.О.**, Соучастие в преступлении, М., 1881, С. 168:

⁵⁹² Տե՛ս **Albert Friedrich Berner**, Die Lehre von der Teilnahme am Verbrechen, Keip, 1996, P. 36:

⁵⁹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, ընդհանուր մաս, ԵՊՀ իրատարակ., Երևան, 2012, էջ 290:

⁵⁹⁴ ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Եթե կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակողի գործողությունները չեն հաջողվում իրենցից անկախ հանգամանքներով, ապա այդ անձանց պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար»: Նման դեպքերը քրեական իրավունքի տեսության մեջ անվանվում են չհաջողված հանցակցություն:

դիտավորության մեջ, սակայն հասցված վնասը պայմանավորվածից ավելի մեծ է լինում, կամ կատարողը իրականացնում է ոչ թե պայմանավորված հանցանքը, այլ դրան միաբնույթ մեկ այլ հանցանք: Զանազան սահմանազանցումը կարող է վերաբերել նաև ծարացնող հանգամանքներին:

Հանցակցի սահմանազանցման հարցը քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ վճռաբեկ դատարանում: ՀՀ վճռաբեկ դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև հանցագործությանը երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցության դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է գիտակցի ոչ միայն իր, այլ նաև մյուս հանցակիցների վարքագծին վերաբերող հանգամանքները, այդուհանդերձ, դա չի նշանակում, որ հանցակիցը քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայի հատկանիշների ճշտությամբ պետք է բնութագրի այն հանցագործությունը, որի կատարմանը նա մասնակցում է: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության («Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը») օժանդակողը կարող է հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը հեշտացնելու նպատակով միջոցներ տրամադրել կատարողին, որպեսզի նա հնարավորություն ստանա չարամտորեն խուսափել հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց, սակայն օժանդակողը կարող է չիմանալ նշված հանցագործության կատարման կոնկրետ տեղը, ժամանակը, եղանակը կամ այն վնասի չափը, որը կարող է պատճառվել պետությանը: Նման դեպքում օժանդակողը պատասխանատվության պետք է ենթարկվի փաստացի կատարված հանցագործությանը հանցակցելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակցի սահմանազանցման հարցը քննարկելիս իրավակիրառողը հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները պետք է գնահատի ոչ միայն առանձին-առանձին՝ երկու և ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու փաստը հաստատելու համար, այլև իրենց օրգանական ամբողջության մեջ, որպեսզի լիարժեք լուծի նշված անձանց պատասխանատվության և պատժի հարցը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցի սահմանազանցում առկա չէ այն դեպքում, երբ հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն օրգանական ամբողջության մեջ գնահատելու արդյունքում կպարզվի, որ՝

ա) միևնույն հանցանքը կատարող երկու կամ ավելի անձինք փոխադարձաբար տեղյակ են եղել, որ իրենց արարքները գտնվում են պատճառական կապի մեջ (համատեղ են) և ուղղված են միևնույն հանցագործության կատարմանը,

բ) յուրաքանչյուր հանցակից նախատեսել է հանցագործության՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը»:

Համատեղ հանցավոր գործունեության առանձնահատկությունը նաև այն է, որ կատարողը (համակատարողը) կամ խմբի այլ մասնակիցը նախապատրաստման, իսկ առավել հաճախ հանցափորձի փուլում շեղվում է համատեղ պայմանավորված վարքագծից: Սա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր հանցակից ունի հոգեկան կառուցվածքի ինդիվիդուալ առանձնահատկություններ (օրինակ՝ խառնվածք) և անատոմիական կառուցվածքի առանձնահատկություններ (օրինակ՝ հաշմանդամություն, հենաշարժիչ համակարգի խնդիրներ, կուրություն), ինչպես նաև հանցակիցների կողմից չնախատեսված հանգամանքների առաջացում, որոնք հեշտացնում կամ դժվարացնում են արարքի կատարումը⁵⁹⁵:

⁵⁹⁵ Տե՛ս **Антоян Ю.М., Эминов В.Е.** Личность преступника, криминолого-психологическое исследование. Москва, Норма, 2017, էջ 69: Տե՛ս նաև **Лунеев В.В.** Криминалогия. Москва, Юрайт, 2019, С. 182:

Ջրեական իրավունքի տեսության մեջ, ինչպես արդեն նշվել է, հանցակցի սահմանազանցումը ընդունված է տարբերակել քանակականի ու որակականի:

Քանակական սահմանազանցման դեպքում կատարողը վնաս է պատճառում այն օբյեկտին, որը պայմանավորվածության համաձայն՝ ընդգրկված էր հանցակիցների դիտավորության մեջ, սակայն հասցված վնասը պայմանավորվածից ավելի մեծ է լինում, կամ կատարողը իրականացնում է ոչ թե պայմանավորված հանցանքը, այլ դրան միաբնույթ մեկ այլ հանցանք: Քանակական սահմանազանցումը կարող է վերաբերել նաև ծարացնող հանգամանքներին:

Որակական սահմանազանցման դեպքում կատարողն իրականացնում է պայմանավորված հանցագործությունից բնույթով տարբեր հանցանք կամ բացի պայմանավորվածից կատարում է ևս մեկ ոչ միաբնույթ հանցանք: Այսինքն՝ որակական սահմանազանցումը նախապես որոշված արարքի չհամաձայնեցված շարունակությունն է, որն արտասխայտվում է տարաբնույթ հանցանք կատարելով:

Որոշակիորեն հարաբերակցվում են որակական սահմանազանցումը և այսպես կոչված չհաջողված հանցակցությունը: Այսպես, եթե հանցակիցը պայմանավորվածի փոխարեն իրականացնում է իր բնույթով բոլորովին այլ հանցանք, և եթե այդ արարքը հանցակիցների դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի բաղկացուցիչ մասը չէ և չի կլանվում կատարված հանցագործությամբ, ապա առկա է չհաջողված հանցակցություն: Հանցակցի որակական սահմանազանցման դեպքում հանցակցությունը ըստ էության չի ստացվում, քանի որ պատճառական կապը մասնակիցների արարքների և կատարողի իրականացրած հանցագործության միջև կամ բացակայում է, կամ էլ կրում է ձևական բնույթ:

Ողջունելի է Նախագծի՝ սահմանազանցման դեպքում հանցակիցների պատասխանատվության հարցը կարգավորող իրավանորմերի ամրագրումը: Այսպես, Նախագծի 50-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը կարգավորում են հանցակիցների պատասխանատվությունը քանակական և որակական սահմանազանցումների դեպքում ամրագրելով հետևյալը. «... 3. Եթե հանցանքը կատարողը վնաս է պատճառում այն օբյեկտին, որին վնաս պատճառելը պայմանավորված էր հանցակիցների հետ, սակայն պայմանավորվածից ավելի ծանր վնաս է պատճառում կամ վնաս է պատճառում պայմանավորված օբյեկտին, սակայն պայմանավորվածի փոխարեն այլ՝ ավելի ծանր հանցանք կատարելով և այլ օբյեկտի վնասելով, որով իրագործվում է նաև հանցակիցների նպատակը, կամ պայմանավորված հանցանքը կատարում է ծանրացնող հանգամանքով, որն ընդգրկված չէր մյուս հանցակիցների դիտավորության մեջ, ապա հանցակիցները ենթակա են քրեական պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար:

4. Եթե հանցանք կատարողը պայմանավորվածի փոխարեն կատարում է ավելի ցածր վտանգավորություն ունեցող հանցանք, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար:

5. Եթե հանցանք կատարողը պայմանավորվածի փոխարեն վնաս է պատճառում այլ օբյեկտի, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար: Պայմանավորվածի փոխարեն մեկ այլ օբյեկտի վնաս պատճառելու դեպքում մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար, եթե կատարողի արարքն ավելի ծանր հանցագործություն է և հանցակիցների դիտավորության մեջ ընդգրկված հանցանքը դրա բաղկացուցիչ մասն է ու կլանվում է կատարողի հանցագործությամբ»:

Հանցակցի սահմանազանցման առումով քննարկենք հետևյալ օրինակը. Ա-ն և Բ-ն պայմանավորվում են Գ-ին պատկանող խանութից գողություն կատարել: Պայմանավորվածության համաձայն Ա-ն և Բ-ն տարբեր մուտքերից մուտք են գործում

պահեստարան: Հավիչտակության իրականացման ժամանակ պահեստարանում գտնվող պահակ Դ-ն նկատում է Բ-ին: Բ-ն, նկատելով Դ-ին, վերցնում է արդեն ձեռք բերվածը և դիմում փախուստի: Հանդիպելով Ա-ին՝ Բ-ն պատմում է կատարվածի մասին: Այդ ժամանակահատվածում Դ-ն միացնում է անվտանգության ազդանշանը, ինչի արդյունքում Ա-ն և Բ-ն դիմում են փախուստի, բայց բռնվում են:

Գտնում ենք, որ բերված օրինակում Ա-ն և Բ-ն ենթական են քրեական պատասխանատվության՝ մի խումբ անձանց կողմից պահեստարան մուտք գործելով կողոպուտի փորձի համար հետևյալ հիմնավորմամբ: Բ-ի կողմից կողոպուտի իրականացման պահին հանցակից Ա-ն, տեղեկանալով Բ-ի կողմից կատարվող գործողությունների մասին, հանցագործությունը կատարելու ընթացքում աջակցել է Բ-ին և շարունակել է հանցանքի կատարումը: Հետևաբար առաջարկում ենք Օրենսգրքի 40-րդ հոդվածը լրացնել 3-րդ, իսկ Նախագծի 50-րդ հոդվածը 6-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «Համակատարողի (համակատարողների) կողմից սահմանապահում թույլ տալու դեպքում արարքը պետք է որակել մի խումբ անձանց կողմից կատարված, եթե մյուս համակատարողը (համակատարողները) միացել է(են) սահմանապահում թույլ տված համակատարողի (համակատարողների) սահմանապահում համարվող արարքին»:

Արված առաջարկը հիմնավորելու համար քննարկենք ևս մեկ օրինակ: Ա. Ժամկոչյանը և Ս. Ժամկոչյանը մեղադրվում են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ավագակություն կատարելու համար: Նրանց պաշտպանը պնդում էր, որ ամբաստանյալների միջև նախապես պայմանավորված բռնությունն առողջության համար վտանգավոր չի եղել, հետևաբար նախնական պայմանավորվածությունից դուրս մյուս հանցակցի կողմից կատարված ցանկացած գործողություն պետք է համարվի հանցակցի սահմանազանցում և մեղսագրվի բացառապես սահմանազանցողին: Պաշտպանը նաև պնդում էր, որ ամբաստանյալ Ս.Ժամկոչյանին ՀՀ քր. օր-ի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը պետք է վերավորակվի ՀՀ քր. օր-ի 176 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Այս առումով դատարանը նշել է հետևյալը. «... հարկ է նշել, որ եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ ի սկզբանե տուժողի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը ընդգրկված չի եղել ամբաստանյալ Ս.Ժամկոչյանի դիտավորության մեջ, այդուհանդերձ՝ ամբաստանյալ Ա.Ժամկոչյանի կողմից այն իրականացնելու պահին ավագակության հանցակից Ս.Ժամկոչյանը, տեսնելով Ա.Ժամկոչյանի կողմից կատարվող գործողությունները, հանցագործությունը կատարելու ընթացքում աջակցել է վերջինիս և շարունակել է հանցանքի կատարումը, հետևաբար բացակայում է ինչպես հանցակցի սահմանազանցումը, այնպես էլ դրա կիրառման անհրաժեշտությունը և ամբաստանյալ Ս.Ժամկոչյանի արարքը ճիշտ է որակված՝ որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ավագակություն: Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ ամբաստանյալ Ս.Ժամկոչյանին ՀՀ քր. օր-ի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը ՀՀ քր. օր-ի 176 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերադրակելու վերաբերյալ պաշտպանի հետևությունները»:

Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելու առումով հետաքրքրական են այն դեպքերը, երբ կատարողի նկատմամբ գործի վարույթը կարճվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁵⁹⁶ 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով, այն է՝ արարքի մեջ հանցակազմ չկա: Ասվածը վերաբերում է Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին,

⁵⁹⁶ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, որը ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել: Կարծում ենք, որ այս դեպքում քրեական գործի վարույթը պետք է դադարեցվի նաև մյուս հանցակիցների մասով՝ պայմանով, որ կատարողի արարքների նվազ կարևորությունը գիտակցվել է համատեղ գործող այլ անձանց կողմից: *Առաջարկում ենք Օրենսգրքի 39-րդ հոդվածը լրասնել 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե կատարողը ապատվում է քրեական պատասխանատվությունից 18-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ապա մյուս հանցակիցները ևս ապատվում են քրեական պատասխանատվությունից, եթե նրանց դիտավորությունը նույնպես ուղղված է եղել հասարակական վտանգավորություն չներկայացնող և նվազ կարևորություն ունեցող արարքի իրականացմանը»:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բովանդակությանը նման կարգավորում է նախատեսված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի⁵⁹⁷ 12-րդ հոդվածի 2-րդ կետում, առաջարկում ենք ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ևս լրացնել հետևյալ կարգավորմամբ: Այսպես, առաջարկում ենք նախագծի 48-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. *«Եթե կատարողը ապատվում է քրեական պատասխանատվությունից 84-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ապա մյուս հանցակիցները ևս ապատվում են քրեական պատասխանատվությունից, եթե նրանց դիտավորությունը նույնպես ուղղված է եղել այնպիսի արարքի իրականացմանը, որը նվազ վտանգավորության հետևանքով էական գույքային վնաս չի պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին»*⁵⁹⁸:

Հանցավոր խմբի մասնակիցների սահմանազանցման հարցը լուծվում է ընդհանուր կարգով, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն կարող է լինել բարդացված: Օրինակ՝ սահմանազանցում կարող է թույլ տալ ինչպես հանցակիցներից մեկը, այնպես էլ մի քանիսը կամ բոլորը: Սահմանազանցման դեպքում խմբի անդամների պատասխանատվությունը և կատարվածի քրեաիրավական որակումը կախված է սահմանազանցման տեսակից և խմբի կողմից կատարված հանցագործության հատկանիշների և հանցակցության առանձնահատկությունների զուգակցումից: Խմբի անդամների սահմանազանցման դեպքում նոր հանցանք կատարելիս նրանց դերերը կարող են փոխվել, ինչը, բնականաբար, անդրադառնալու է նրանց կատարածի որակման վրա: Իսկ ինչ վերաբերում է խմբի մյուս անդամներին (սահմանազանցում թույլ չտված), ապա նրանց պատասխանատվության համար էական է հետևյալը. կատարվել է արդյոք պայմանավորված, եթե ոչ, ապա ինչու (կամովին հրաժարում⁵⁹⁹, հանցանքի խափանում), և ո՞ր փուլում է ընդհատվել հանցանքը:

⁵⁹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, որը հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2085/about>, (03.07.2020):

⁵⁹⁸ Նախագծի 84-րդ հոդվածի իրավակարգավորումներից հետևում է, որ քրեական պատասխանատվությունից այս հեղվածի ուժով ազատվում է միայն առաջին անգամ հանցանք կատարած անձը, հետևաբար այս կարգավորումը տարածվում է միայն առաջին անգամ հանցավոր գործունեություն իրականացրած հանցակցի վրա:

⁵⁹⁹ Օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «3. Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը»: Իսկ նույն օրենսգրքի 4-րդ մասը ամրագրում է հետևյալը. «Եթե սույն հոդվածի երրորդ մասում նշված գործողությունները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»: Առավել ընդունելի է նախագծի իրավակարգավորումը: Համաձայն նախագծի 83-րդ հոդվածի՝ «4. Հանցագործության կազմակերպիչը կամ դրդիչը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե կազմակերպիչի կամ դրդիչի գործողությունները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»:

5. Օժանդակողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում նրա քրեական պատասխանատվության հարցը լուծվում է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմաններով՝

Որոշ առանձնահատկություններ ունի միջնորդավորված կատարման դեպքում հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կամ անզգուշությամբ գործողի սահմանազանցումը, այսինքն՝ միջնորդավորված կատարողի դիտավորության սահմաններից դուրս գալը: Մեր կարծիքով՝ միջնորդավորված կատարողը պետք է պատասխանատվություն կրի վերը թվարկված անձանց այն բոլոր արարքների համար, որոնց վերաբերյալ կհաստատվի, որ միջնորդավորված կատարողը գիտեր կամ նախատեսել էր և գիտակցաբար թույլ է տվել հնարավոր շեղումներ «կենդանի գործիքի» արարքներում: Ասվածը մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ որպես գործիք օգտագործվող անձինք չեն գիտակցում (որոշ դեպքերում չեն էլ կարող գիտակցել) իրենց արարքների հասարակական վտանգավորությունը և ղեկավարել դրանք: Իսկ այս հանգամանքները պարտավոր է հաշվի առնել նրանց որպես գործիք օգտագործող անձը: Հենց այս հանգամանքների հաշվառմամբ էլ առաջարկում ենք խստացնել վերը թվարկված անձանց որպես գործիք օգտագործողի պատասխանատվությունը: Այսպես, առաջարկում ենք Օրենսգրքի 40-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «*Միջնորդավորված կատարողը պատասխանատվություն է կրում հանցանքը փաստացի կատարող անձի սահմանազանցում համարվող այն արարքների համար, որոնք միջնորդավորված կատարողը կարող էր նախատեսել*»: Առաջարկում ենք նաև Նախագծի 50-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «*Հանցանքը միջնորդավորված իրականացնողը պատասխանատվություն է կրում հանցանքը փաստացի իրականացրած անձի սահմանազանցում համարվող այն արարքների համար, որոնք միջնորդավորված իրականացնողը կարող էր նախատեսել*»: Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածը լրացնել 25-րդ և 26-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«25) Հանցանքի միջնորդավորված իրականացում՝ իրավիճակ, որի դեպքում հանցանքը իրականացվում է այնպիսի անձ օգտագործելու միջոցով, որը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անլզուշությամբ: Կատարողի համար միջնորդավորված իրականացումը առկա է նաև այն դեպքում, երբ փաստացի կատարողը ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող: Հանցանքի միջնորդավորված իրականացում հնարավոր է կատարողի, դրոշի, կապմակերպչի և օժանդակողի կողմից:

26) Հանցանքը միջնորդավորված իրականացնող՝ անձ, ով հանցանքը իրականացրել է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անլզուշությամբ, իսկ կատարողի պարագայում նաև՝ այնպիսի անձ օգտագործելու միջոցով, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող»:

Հետաքրքրական են այն դեպքերը, երբ խմբի կազմում քրեական պատասխանատվության ենթակա անձանցից բացի կան նաև այնպիսիք, որոնք օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Նկարագրվածը տարբերվում է հանցանքի միջնորդավորված իրականացումից նրանով, որ հանցանքը իրականացվում է ոչ

բացառությամբ տեղեկատվություն, գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտները վերացնելու եղանակով կատարված օժանդակության դեպքերի: Նշված եղանակներով օժանդակության դեպքում անձն օժանդակության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա հետ է վերցրել տրամադրած գործիքը կամ միջոցը կամ վերականգնել է խոչընդոտները: Եթե նշված գործողությունները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում հաստատապես հայտնի նախապատրաստվող հանցագործության մասին իմանալ չհայտնելու համար:

6. Համակատարողը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ այլ միջոցներով կանխում է կատարողի կողմից հանցագործությունը ավարտին հասցնելը: Եթե համակատարողի կողմից գործադրված միջոցները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»:

թե քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձանց միջոցով, այլ վերջինների հետ համատեղ՝ միասնական ջանքերով: Առաջարկում ենք խստացել այն անձանց քրեական պատասխանատվությունը, որոնք խումբ են ընդունում քրեական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասի կամ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կամ հանցանքի կատարման մեջ են նման անձանց ներգրավում կամ նրանց մեջ հանցավոր հակումներ առաջացնում: Նշված առաջարկների տեղայնացմանն էլ ուղղված են ստորև ներկայացվող փոփոխություններն ու լրացումները:

Առաջարկում ենք Օրենսգրքի 165-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 165. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը⁶⁰⁰

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը՝ պատժվում է ապատապրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության պարտականություն՝

պատժվում է ապատապրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ պաշտօնազատելու կամ որոշակի գործունեությամբ պաշտօնազատելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում են ապատապրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ պաշտօնազատելու կամ որոշակի գործունեությամբ պաշտօնազատելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները՝ պուզորդված՝ անչափահասին կապմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն ներգրավելով՝

պատժվում են ապատապրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ պաշտօնազատելու կամ որոշակի գործունեությամբ պաշտօնազատելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Առաջարկում ենք Օրենսգրքի 265.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոգեկան հիվանդությամբ տառապող անձին հանցանքի կատարմանը հակելը կամ ներգրավելը

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից հոգեկան հիվանդությամբ տառապող անձին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը կամ հանցավոր վարքագծի կանոններ սերմանելը՝ պատժվում է ապատապրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է այն անձի կողմից, ում վրա դրված է հոգեկան հիվանդությամբ տառապող անձին խնամելու պարտականությունը՝ պատժվում է ապատապրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները՝ պուզորդված՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձին կապմակերպված խմբի կամ

⁶⁰⁰ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար: Մեր կարծիքով՝ նման մոտեցումը ոչնչով արդարացված չէ, ուստի առաջարկում ենք քրեական պատասխանատվություն սահմանել ցանկացած անչափահասի (տվյալ հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելու հանգամանքից) հանցանքի կատարմանը ներգրավելու համար:

հանցավոր հանագործակցության կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն ներգրավելով՝

պատժվում են ապատապրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով»:

Առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ 298-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ, և հաջորդող հոդվածները վերահամարակալել:

«Հոգեկան հիվանդությամբ տառապող անձին հանցանքի կատարմանը հակելը կամ ներգրավելը

1.Տասնութ տարին լրացած անձի կողմից հոգեկան հիվանդությամբ տառապող անձին հանցագործության հետևություններ սովորեցնելը, հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթանկատարյալի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելը, հանցանքներ կատարել քարոզելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր ժամ տևողությամբ, կամ ապատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ապատապրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ապատապրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2.Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է այն անձի կողմից, ում վրա դրված է հոգեկան հիվանդությամբ տառապող անձին խնամելու կամ բուժելու պարտականություն՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոն պահեցնելու կամ որոշակի գործունեությամբ պաշտվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ապատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ապատապրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ապատապրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3.Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված հանցանքները, որոնք կատարվել են հոգեկան հիվանդությամբ տառապող անձին հանցավոր կապմակերպության մեջ ներգրավելով կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն մասնակից դարձնելով՝

պատժվում են ապատապրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Եզրակացություն

Հանցակցի սահմանազանցմամբ ուղեկցվող հանցագործությունների որակման և պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրման ու վերլուծության արդյունքում եկել ենք մի շարք եզրահանգումների և ներկայացրել օրենսդրական առաջարկներ:

Հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում հանցանքը փաստացի կատարած անձի կողմից ընդհանուր հանցավոր մտադրությունից շեղվելու դեպքում քրեաիրավական արձագանքման առումով առաջ են գալիս որոշ բարդություններ, որոնց լուծման նպատակով սույն աշխատանքում արված են կոնկրետ առաջարկներ:

Ինչպես Օրենսգիրքը, այնպես էլ Նախագիծը կարգավորում են սահմանազանցման դեպքում հանցակցի պատասխանատվության հարցերը ընդհանուր հանցակցության պարագայում, իսկ համակատարման դեպքում սահմանազանցման համար քրեական պատասխանատվության հարցերը մնում են բաց: Նշված բացը լրացնելու համար աշխատանքում արված է օրենսդրական առաջարկ:

Որոշ առանձնահատկություններ ունի միջնորդավորված կատարման դեպքում հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կամ անզգուշությամբ գործողի սահմանազանցումը, այսինքն՝ միջնորդավորված կատարողի դիտավորության սահմաններից դուրս գալը: Մեր կարծիքով՝

միջևորդավորված կատարողը պետք է պատասխանատվություն կրի վերը թվարկված անձանց այն բոլոր արարքների համար, որոնց վերաբերյալ կհաստատվի, որ միջևորդավորված կատարողը գիտեր կամ նախատեսել էր և գիտակցաբար թույլ է տվել հնարավոր շեղումներ «կենդանի գործիքի» արարքներում: Ասվածը մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ որպես գործիք օգտագործվող անձինք չեն գիտակցում (որոշ դեպքերում չեն էլ կարող գիտակցել) իրենց արարքների հասարակական վտանգավորությունը և ղեկավարել դրանք: Իսկ այս հանգամանքները պարտավոր է հաշվի առնել նրանց որպես գործիք օգտագործող անձը: Հենց այս հանգամանքների հաշվառմամբ էլ առաջարկում ենք խստացնել վերը թվարկված անձանց որպես գործիք օգտագործող պատասխանատվությունը:

Ինչպես արդեն նշվել է, հետաքրքրական են այն դեպքերը, երբ խմբի կազմում քրեական պատասխանատվության ենթակա անձանցից բացի կան նաև այնպիսիք, որոնք օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Նկարագրվածը տարբերվում է հանցանքի միջևորդավորված իրականացումից նրանով, որ հանցանքը իրականացվում է ոչ թե քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձանց միջոցով, այլ վերջինների հետ համատեղ՝ միասնական ջանքերով: Կարծում ենք՝ անհրաժեշտ է խստացել այն անձանց քրեական պատասխանատվությունը, ովքեր խումբ են ընդունում քրեական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասի կամ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կամ հանցանքի կատարման մեջ են նման անձանց ներգրավում կամ նրանց մեջ հանցավոր հակումներ առաջացնում: Ասվածն իր արտացոլումն է գտել Օրենսգրքի և Նախագծի լրացման ուղղված կոնկրետ առաջարկների տեսքով:

PECULIARITIES OF QUALIFICATION OF CRIMES, RELATED TO THE EXCESS OF COMPLICITY

GEVORG BARSEGHYAN

*Yerevan State University, Faculty of Law, Master's degree, 1st year
Yerevan, Republic of Armenia*

This article comprehensively presents the concept of excess crimes, its types, and the possibility of excess by each accomplice. Comparisons are made between the current Criminal code of the RA and the draft of RA Criminal code. The paper also mentions some provisions of the criminal code of the Armenian Soviet Socialist Republic of 1961 concerning complicity. The paper analyzes the case-law of the cassation court of the Republic of Armenia on the excess crimes and some interesting court cases.

The purpose of this work is to develop a general concept of the excess crimes, the qualification and rules of responsibility for crimes involving excesses, and the submission of legal proposals for improving criminal legislation and law enforcement practice.

To achieve this purpose, the following tasks were identified:

- to analyze the concept, essence and signs of complicity, according to the RA criminal code, drawing Parallels between the criminal code the Armenian Soviet Socialist Republic of 1961 and the draft of the new criminal code of the Republic of Armenia,
- to analyze the concept, types and characteristics of an excess,
- to give criminal-legal assessments of individual manifestations of excesses of accomplices,
- to consider the problems of criminal law assessments of crimes associated with the excesses of complicity.

The methodological bases of this work are the dialectical and historical methods. The object and subject of the research were observed using such general and special methods of scientific knowledge, as dogmatic, comparative-legal, legal modeling, logical analysis.

Based on the analysis of the legislation and judicial practice of the Republic of Armenia, some issues of qualification of excess crimes were discussed in this work, as well as possible legal solutions were offered.

Keywords: *accomplice, co-executor, excesses, indirect execution of a crime, a minor, a person suffering from a mental illness.*

ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ, СОПРЯЖЁННЫХ С ЭКСЦЕССОМ СОУЧАСТИЯ

ГЕВОРГ БАРСЕГЯН

*магистрант 1-го курса юридического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

В настоящей работе всесторонне представлено понятие эксцесса соучастника преступления, его виды, возможность допущения каждым соучастником нарушения границ. Проведены параллели между действующим Уголовным кодексом РА и проектом нового Уголовного кодекса РА. В работе упомянуты также некоторые положения Уголовного кодекса Арм. ССР 1961 года, касающиеся соучастия. В работе проанализированы прецедентные решения кассационного суда Республики Армения об эксцессе соучастника преступления и судебные дела, представляющие интерес.

Целью данной работы является разработка общего понятия об эксцессе соучастника, квалификации и правил ответственности за преступления, сопряжённые с эксцессом, представление предложений по совершенствованию уголовного законодательства и правоприменительной практики.

Для достижения поставленной цели были выделены следующие задачи:

- проанализировать понятие, суть и признаки соучастия, согласно уголовному кодексу РА, проводя параллели между кодексом АРМ. ССР 1961 года и проектом нового уголовного кодекса РА,
- проанализировать понятие, виды и характеристики эксцесса,
- дать уголовно-правовые оценки отдельным проявлениям эксцесса соучастников,
- рассмотреть проблемы уголовно-правовых оценок преступлений, сопряжённых с эксцессом соучастия.

Методологической основой данной работы является метод диалектического и исторического подхода к рассмотрению объекта и предмета исследования с использованием общих и специальных методов научного познания, таких, как догматический, сравнительно-правовой, правового моделирования, логического анализа.

В работе а основе анализа законодательства и судебной практики Республики Армения были рассмотрены некоторые вопросы квалификации преступлений, сопряжённых с эксцессом соучастия, и предложены их возможные законодательные решения.

Ключевые слова: *соучастник, соисполнитель, эксцесс, опосредованное исполнение преступления, несовершеннолетний, лицо, страдающее психическим заболеванием.*